

XXXX

891 850

U-40

298

180

00

V

ՍԵՆԿԵԻԻՉ

I

ԶԻՆՈՐ ԱՂԱԿԵՐՏՆԵՐԻ ՕԳՏԻՆ.

ԵՐԱԺԻՇՏ ԵԱՆԿՈՆ

Թարգմ. Ղ. Ս. Սերգենցի.

Վ. Ա. Ղ. Ա. Ր. Շ. Ա. Պ. Տ.

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի.

1899

891. 851  
Ս - 40

2004

Մայ.

Ստեփան Սարգսյան

891851

Ս-40

Ս Ե Ն Կ Ե Ի Ի 2

I

ԶԻՄՈՐ ԱԶԱԿԵՐՏՆԵՐԻ ՕԳՏԻՆ.

ԵՐԱԺԻՇՏ Ե Ա. Ն. Կ 0 Ն

Քարգամ. ուսմերէնից.

Վ. Ա. Ղ. Ա. Ր. Շ. Ա. Պ. Ա. Տ.

Տպարան Մայր Արոտոյ Ս. Էջմիածնի.

1899

40983. ա.

Дозволено Цензурою, 16 Ноября 1898 г. г. Тифлисъ



9-24716-61



և թող նուազ մա-  
նուկ ծնուեց լոյս  
աշխարհ: Գրացի կա-  
նայք, որոնք հա-  
ւաքուել էին ծնընդ-  
կանի անկողնի շուր-  
ջը, ցաւակցաբար շարժու մ  
էին գլուխները թէ՛ մօր և

թէ՛ մայրուկի վերայ: Գործնի կին Հիմա-  
նովան, ոք ամենից աւելի փորձառուն էր,  
սկսեց հեւանդին մխիթարել:

— Ի՛նչ, ես օրհնած մամը վառեմ, —  
ասաց նա: — Սանամայր, էլ քեզ սչինչ չի  
մ'նու մ. դու պէտք է պատրաստուես ճա-  
նապարհ ընկնել Եդեսի միւս աշխարհ, և  
ուղարկես քահանայի ետեկց, որ նա թո-  
ղու թիւն ասոյ քո մեղքերն:

— Իսկ մանուկին — ասաց միւսը, —  
 պէտք է խոխոյն կնքել. նա չի՛ ապրել մինչև  
 քահանայի գալը. լաւ է, գոնէ անհաւատ  
 չի մեռնել:

Այս ատելով, նա վառեց օրհնած  
 մոմը, յետոյ վեր առաւ երեխային, ջրով  
 սրսկեց, որից նա սկսեց աչքերը բաց ու  
 խուփ անել ու վերջապէս ասաց:

— Անքում եմ քեզ յանուն Հօր և Ար-  
 դույ և Հոգւոյն սրբոյ և անունդ գնումեմ  
 Եանա, իսկ այժմ քրիստոնէայ հոգի՛ որ-  
 տեղից եկել ես, այնտեղ էլ գնա՛. ամէն:

Բայց քրիստոնէական հոգին քուրք-  
 վին մտադեր չէր գնալ այնտեղ, որտեղից  
 եկել էր և թողնել իւր նուազ մարմինը —  
 ընդհակառակն, նա սկսեց այդ մարմնի  
 ստերով աքացիներ տալ, ինչպէս կարող էր,  
 և լալ, թէպէտ և այնքան թոյլ ու ոգոր-  
 մելի ձայնով, որ ինչպէս յետոյ կնքամայր-  
 ներն ատում էին «մտաբերելն անգամ ծի-  
 ծաղելի էր. կատուի ձագ ատեա՛ կատուի  
 ձագ չէ՛, բայց, ծղրատում է»:

Քահանայի յետևից ուղարկեցին. նա  
 եկաւ, արեց, ինչ որ հարկն էր ու գնաց:  
 Հիւանդը փոքր ինչ թեթևութիւն գրաց:  
 մի շաբաթից յետոյ գեղջկուհին գնաց  
 գործի: Մանուկը դեռ ծղրատում էր, բայց

գոնէ հօ ծղրատում էր և այդպէս մի կերպ  
 ապրեց մինչև տասը տարեկան դառնալը:  
 Նա նիհար էր, արևից սևացած, փոքր փքը-  
 ուած ու թշերը խոր ընկած. վազոյն  
 մազերը համարեա սպիտակ էին ու թափ-  
 թափուում էին փայլուն ու գուրս ընկած  
 աչերի վերայ, որոնք այնպէս էին նայում  
 ամեն բանի, ինչպէս կնայեն հեռու տա-  
 րածութեան վերայ: Չմեռը նա նստում էր  
 հնոցի յետևը և կամացուկ լաց էր լինում  
 ցրտից և երբեմն քաղցից, երբ մայրը ոչինչ  
 չէր ունենում հնոցում խորովելու, կամ  
 կճուճում եփելու. ամառը շապկանց էր  
 ման դալիս, գօտու փոխանակ մի սր և իցէ  
 փալատ կապելով, յարդեայ գլխարկն էլ  
 գլխին, որի եղբների տակից նա թռչնի  
 պէս, գլուխը բարձրացնելով, դէպի վեր էր  
 նայում:

Մայրը, այդ աղքատ բանուորուհին,  
 որ օրէց օր էր ապրում, որպէս ծլծեռ-  
 նակը ուրիշի կարան տակ, գուցէ և սի-  
 բում էր նրան իւր ձևով, բայց յաճախ ծե-  
 ծում էր և միշտ «ընկեցիկ» էր անուանում  
 նրան. Աւթ տարեկան հասակում Եանը  
 արդէն մոնթ էր, բայց երբ խրճիթում ու-  
 տելու ոչինչ չէր լինում, նա գնում էր  
 անտառ սունկի, ինչպէս էր, որ գայլերը

այնտեղ նրան չկերան, այդ միայն Աս-  
ածուն է յայտնի:

Գա մի երկչոտ երեխայ էր և, բոլոր  
գեղջուրի երեխաների պէս, օտարները հետ  
խօսելիս միշտ բռունցքը բերանն էր կո-  
խում: Այ ոք չէր սպասում, թէ նա կմե-  
ծանայ, աւելի քիչ էին սպասում, թէ  
մայրը կարող կլինի նրան մարդ դարձնել.  
Գէպի աշխատանքը նա ընդունակութիւն  
չունէր: Յայտնի չէ, թէ ինչպէս էր պա-  
տահել, միայն թէ նա գէպի միակ մի բան  
սէր ունէր. այդ երաժշտութիւնն էր: Ամեն  
տեղ նա լսում էր այն և հէնց որ փոքր ինչ  
մեծացաւ, էլ ուրիշ բանի վերայ չէր մտա-  
ծում: Պատահում էր, որ անտառ էր գը-  
նում տաւարները հետ, կամ զամբիւղով  
հատապտուղները, բայց միշտ էլ առանց  
պտուղների էր վերադառնում ու թոթով  
լեզուով ասում էր.

— Մայրիկ, անտառում մի բան այն-  
պէս նուագում էր, որ . . . օ՜յ, օ՜յ:

Իսկ մայրն ասում էր.

— Ես նուագել ցոյց կտամ քեզ. դու  
ինձ կձանաչես . . . կասէր ու աւելով վեր  
կհատէր: Փոքրիկը ազագահում էր խոտա-  
նում էր միւս անգամ չանել, բայց ինքը  
չարունակ մտածում էր, որ այնտեղ ան-

տառում մի բան նուագում էր . . . ինչ:  
Միթէ նա այդ գիտէր . . . եղանիներն էլ,  
թեղօշներն էլ, կեչիներն էլ, չինարներն էլ  
— բոլորը նուագում էին, ամբողջ անտառն  
էլ նուագում էր ու պրծաւ գնաց: Եւ  
արձագանքն էլ նայնպէս . . . դաշտում  
նորա համար դալարին էր նուագում. պար-  
տիզում խրճիթի մօտ ճնճողիները սյնպէս  
էին ճթճթում, որ կեռասենիները դողում էին:  
Գիշերները նա ահանջ էր գնում գիւղից  
եկող բոլոր ձայներին և կարծում էր, թէ  
ամբողջ գիւղը նուագում է: Երբ նրան ու-  
ղարկում էին գործի, ազբը սրբելու, նրան  
թւում էր, թէ քամին էլ է նուագում  
եղանին դիպչելով:

Մի անգամ, երբ նա, գլգլուած մաղե-  
րով կանգնած լսում էր, թէ ինչպէս քամին  
նուագում է փայտէ եղանին զարկելով,  
վերահայտուն նրան նկատեց, բայց արեց  
գօսին ու մի լաւ յիշելիք տուեց նրան . . .:  
Այն ինչ այդ բոլորն ի զուր էր: Մարդիկ  
նրան «Երաժիշտ Եանիկ» էին անուանում:  
Գարնանը նա տնից առուի մօտ էր փախ-  
չում սրինգներ շինելու: Գիշերը, երբ գոր-  
տերը սկսում էին կրկուար, կտցահարը փո-  
բել, երբ արագաղները կանչում էին, նըս-  
տած ցանկերը վերայ, նա չէր կարող քնել

և շարունակ ախանջ էր զնում ու Աստուած գիտէ, թէ ինչ երաժշտութիւն էր լսում նա այդ բոլորի մէջ: Մայրը մինչև անգամ չէր կարողանում նրան իւր հետ եկեղեցի տանել, որովհետև հէնց որ երգեհոնն ըսկում էր նուազել և քաղցր ձայներն համերգը բարձրանալ, մշուշով ծածկւում էին երեխայի աչքերը, կարծես նա դէպի մի ուրիշ աշխարհ էր նայում . . . :

Պահապանը, որը գիշերները գիւղի մէջ ման էր գալիս և, որպէս զի չքնէ երկնքի աստղերն էր համարում, կամ կամայորև խօսում էր շներն հետ յաճախ անունում էր Եանն սպիտակ շապիկը, որ մըթութեան մէջ գիմում էր գէպի գինեատուն: Բայց երեսան ո՛չ թէ գինեատուն էր զնում, այլ գինեատան մօտ: Այնտեղ, պատին կպած, նա լսում էր: Մարդիկ պարում էին և երբեմն որ և է մի երիտասարդ բացականչում էր «օ—հօ»:

Մերթ կօշիկների արտիկները մերթ աղջկերանց ձայներ էին լսում. «Ի՛նչ կայ որ», Զութակը հանդարտ նուազում էր. «Աւտե՛նք, խմե՛նք, ուրախանա՛նք», իսկ մեծ բոմբ ջութակը մեղմութեամբ ու արժանապատուութեամբ երկրորդում էր. «Ինչ որ Աստուած տուել է, ինչ որ Աստուած

տուել է»: Լուսամտաները կրակն պէս փայլում էին. գինեատան ամեն մի գերանը շարժւում, երգում, նուազում էր. իսկ Եաննիօն լսում ու լսում էր . . . :

Ի՛նչ չէր տալ նա այն ջութակին փութարէն, որ այդպէս նուրբ եղանակով նուազում էր. «Աւտե՛նք, խմե՛նք, ուրախանա՛նք»: Այն ի՛նչ երգող փայլով կտորներ էն: Ո՛րտեղից են գանում այդ: Ո՛վ է գոցա շինում: Գոնէ մի անգամ այդպիսի բան տային նորա ձեռքը . . . . Որտեղից որտեղ: Նա կարող է միայն լսել, այն էլ միայն մինչև պահապանի ձայնի լսուելը:

—Տուն զնալու ժամանակ չէ՞, տատանայի ճուտ:

Նա խիտոյն փախչում էր իւր բոբիկ ստերով և մթութեան մէջ նրա ախանջին հառնում էր ջութակի ձայնը. «Աւտե՛նք, խմե՛նք, ուրախանա՛նք», և մեծ բոմբ ջութակի պատկառելի ձայնը. «Ինչ որ Աստուած տուել է, ինչ որ Աստուած տուել է»:

Նորա համար մեծ տօն էր այն օրը, երբ նա կարողանում էր լսել ջութակի նուազները, լինէր այդ հարսանիքում, թէ՛ խրախճանում: Յետոյ նա բարձրանում էր հնոցի վերայ և ամբողջ օրեր լսում էր, կատուի պէս նայելով մթութեան մէջ փայ-

լող աչքերով: Նա ինքն իրան համար ծառի կեղևից և ձկան մաղից մի ջութակ շինեց, միայն նա չէր կամենում այնպէս նուազել, ինչպէս գինեանումը. նա մեղմ էր հնչում, սաստիկ մեղմ, համարեալ թէ ինչպէս ճանճը կամ մոծակը: Բայց Եանկօն նրան նուազում էր առաւօտից մինչև երեկոյ, թէպէտ և դորա համար այնպէս ճեճում էին նրան, որ վերջի վերջոյ նա ջարդուած ու խակ խնձորի էր նմանում: Մանուկը օրէց օր աւելի ու աւելի էր նիհարանում, մաղերը հեաղհեաէ աւելի էին թանձրանում, աչքերը աւելի լայնանում, թէպէտ և աւելի էլ արատաւքով էին լցւում, թըշերն ու կուրծքը քանի գնում, աւելի էին փոս ընկնում:

Յատկապէս նա նման էր ո՛չ թէ որբիչ երեխաներին, այլ աւելի իւր ծառի կեղևից շինած ջութակին, որը հազիւ հազ էր հնչում: Սրան կից նա նոր թխած հաց անոնելիս քաղցից մեռնում էր, որովհետև նորա կերակուրն հում դազարն էր ու ջութակ ձեռք բերելու ցանկութիւնը:

Այդ ցանկութիւնը նորան լաւ օրի չհասցրեց: Պարոնի աման ծառան մի ջութակ ունէր և երբեմն գիշերով նուազում էր նրան, որպէս զի հաճոյանայ օրիորդ

աղախնուն: Եաննան երբեմն կուրթուկներն միջով սողում մօտենում էր մառանի բաց դռներին, որպէս զի ջութակին մի լաւ նայի: Նա կախուած էր պատից, դրան հանդէպ, և երեխան ագահութեամբ նայում էր նրա համար անհասանելի սրբութեանը, որին մինչև անգամ ձեռք տալը մեղք է: Այն ինչ նա շատ էր ցանկանում այդ անել: Պոնէ մի անգամ ձեռք առնել և մի լաւ գննել . . . : Խեղճուկ, փոքրիկ սիրտը դողում էր ուրախութիւնից, երբ նա այդ մտածում էր: Մի անգամ մառանը դատարկ էր: Պարոնները վաղուց արտասահմանումն էին ապրում, սուներ անբնակ էր, իսկ սպասաւորը նստած էր աման միւս կողմում օրիորդ աղախնի մօտ: Եանկօն կուրթուկներն ասի, կուչ եկած, վաղուց էր նայում բաց դռներից դէպի իւր ցանկութիւնների նպատակակէտին. լի լուսինը թէք լուսաւորում էր մառանի լուսամուտը, նկարելով նրան հանդէպի պատում մեծ քառակուսու ձևով: Այդ քառակուսին կամայ կամայ սողում էր դէպի ջութակը և վերջապէս բորբոզին լուսաւորեց նրան, այժմ թւում էր, թէ նրանից արծաթափայլ լոյս է թափւում:

Մանաւանդ լաւ էին լուսաւորուած

Նրա ոււուուցիկ մասերը) — այնպէս լաւ, որ Եանկոն չէր կարողանում նայել նոցա: Այդ փայլի մէջ ամենայն ինչ հիանալի կերպով երևում էր. գողաւորուած կողքերը, լարերը ու կոթք: Նրա ախանջները լուսատանիկի պէս էին փայլում: Խոկ երկայնութեամբ կախուած կնանտոցը շողում էր ինչպէս արծաթի սաս: Օ՛խ, այդ բոլորը այնպէս լաւ էր, ինչպէս լինում է հէքիաթում: Եանկոն աւելի ու աւելի ազահուսթեամբ էր նայում: Կուրթուկները մէջ թագնուելով լղար ծնկներին նեցուկ դրուած ձեռքերով, նա նայում էր ու նայում . . .

Մերթ վախը զսպում, պահում էր նրան այդ տեղում, մերթ մի անպարտելի ոյժ հրում էր նրան առաջ: Կախարգութիւն է այդ, ի՛նչ է . . . : Միայն թէ լուսաւորուած ջութակը, կարծես թէ, մօտենում, լողում էր դէպի մանուկը . . . : Երբեմն նա մթնում էր, որպէս զի աւելի սաստիկ լուսաւորուի: Կախարգութիւն է, ի հարկէ, կախարգութիւն է . . . : Այդ փամփանակ քամին փչեց, ծառերը հանդարտ շարժուեցին, կուրթուկները շնչացին և Եանկոն պարզ լսեց.

— Գնա՛, Եանկօ, — մառանում ոչ ոք չկայ . . . : Գնա՛, Եանկօ:

Գլշերը պարզկայ էր: Պարտկում, լճի վերայ, ստիակը երգեց և մերթ կամայ, մերթ բարձր կլկլացնում էր. «Գնա՛ մօտեցի՛ր, վեր առ»: Պատկառելի բուն հանդարտ թռաւ երեխայի դէտով և ճչաց. «Ո՛չ, Եանկօ, մի՛ վերցնի՛ր»: Բայց բուն թռաւ, իսկ ստիակը մնաց ու կուրթուկներն էլ աւելի պարզ էին շնչում. «այնտեղ ոչ ոք չկայ . . . »: Ջութակը նորեց վառուեց, Գունաս, փոքրիկ մարմնիկը յուշիկ քայլերով առաջ շարժուեց, իսկ ստիակը կամացուկ շվլացնում էր. «Գնա՛ մօտեցի՛ր, վեր առ»: Սպիտակ շապիկը աւելի և աւելի էր մօտենում դրան: Այժմ նրան արդէն չեն ծածկում սև կուրթուկները: Մառանի շէմքում լսվում է հիւանդ երեխայի կրճրի արագացած շնչառութիւնը: Էլի մի բոպէ, սպիտակ շապիկը աներևոյթացաւ և միայն բորիկ տան է մնում շէմքի յետևը: Ի գորը ես, դու, բուրի, նորեց թռչում ու մի անգամ էլ աղաղակում ես «ոչ, մի՛ վերցրո՛ւ» — Եանկոն արդէն մառանումն է:

Ճահիճում ահագին գորտերը խոկոյն կրկուային, կարծես թէ վախեցան, բայց յետոյ էլի հանդստացան. Ստիակը զեղզեղելուց դադարեց, կուրթուկները շնչա-

լուց: Այդ ժամանակ Եանկօն հանդարտ սողում էր, բայց ահը նրան աւելի և աւելի էր լցնում: Վաւթուկներն մէջ նա ինքն իրեն, ինչպէս տանն էր զգում: Իսկ այժմ՝ կարծես վայրենի գազան լինէր թակարգում:

Նրա շարժումներն էր—կոշտ էին, շքն-չառութիւնը արագացած և սուլիչ էր, յետոյ մթութիւնը բոլորովին կլանեց Եանկօն: Ամարային մեղմ վայլակը, որը թըռչում էր երկնքով, մը անգամ էլ լուսաւորեց մառանի ներսը ու Եանկօն, որ չորեքթաթ մ'սացած էր ջութակի առաջ, գլուխը վեր բարձրացրած: Բայց վայլակը հանգաւ, լուսինը թաղնուեց ամպի տակ և արդէն ոչինչ ո՛չ երևում էր, ո՛չ լսվում:

Մի րոպէից յետոյ հանդարտ ու արեւուր ձայն լսելի եղաւ մթութեան մէջ, կարծես թէ մէկը անդուռը կերպով լարելն ձեռք տուեց և յանկարծ . . . մի կոպիտ քնաթաթախ ձայն, որ հասնում էր անկիւնից, բարկացած հարցրեց.

— Այդ ո՞վ է այդտեղ:

Եանկօն շնչառութիւնը կարեց, բայց կոպիտ ձայնը նորեց հարցրեց.

— Այդ ո՞վ է:

Մէկը լուցիկն քսեց պատին, լուսա

ցաւ, իսկ յետոյ . . . : Տէր Աստուած, հայհոյանքի, ծեծի, երեխայի լացի, աղաղակի ձայներ լսուեցան. «Տ՛, ի սէր Աստուծոյ—չների հաչոցը, մոմերի փայլը լուսամուտներում» ամբողջ տան մէջ աղաղակը . . .

Միւս օրը խեղճ Եանկօն կանգնած էր արդէն դատաստանական ժողովի առաջ:

Պէտք էր արդեօք նրան դատէին ինչպէս գողի.

Ի հարկէ, նայեցին նրան ժողովն ու դատաւորները, թէ ինչպէս էր նա կանգնած նրանց առաջ մատերը բերնում, վախեցած, չուած աչքերով, ինքը փոքրիկ, նուազ, ջարդուած, առանց իմանալու, թէ մէր է, և թէ ի՛նչ են ուզում նրանից . . . : Այստեղ ինչպէս դատես, մանաւանդ, որ նա ընդամէնը միայն տասը տարեկան էր և հողիւ հող կանգնում էր ոտքերի վերայ . . . : Չգէլ նրան բանտ, թէ էլ ինչ անել . . . : Այնու ամենայնիւ թէկուզ մի կաթիլ գութ էլ պէտք է ունենալ: Թող պահապանը վեր առնի նրան, թո՛ղ ձեծէ, որպէս զև միւս անգամ նա չփորձէ գողութիւն անել, և պրծաւ դնաց:

Ոչեցին պահապան Ստախին:

— Գէ՛հ, վէ՛ր առ սրան և այնպէս ձեծէ, որ մտքին պահի:

Ստախը շարժեց իւր յիմար ու դադար  
 նային գլուխը՝ վեր առաւ Եանիօին ու  
 առեց իւր կոնսաափը՝ ինչպէս մի կատուի  
 ձագի ու տարաւ դէպի համբարանոցը։  
 Երեխան կամ չէր հասկանում՝ թէ ինչ է  
 կատարվում կամ սաստիկ վախեցած էր՝  
 բայց ձայն ու ծպտոց չհանեց, այլ միայն  
 նայում էր՝ ինչպէս բռնուած թռչունը  
 կնայէ։ Բայց միթէ նա գիտէ, թէ ինչ են  
 անում նրան։ Եւ երբ միայն Ստախը տա-  
 րածեց նրան համբարանոցում գետնի վե-  
 րայ և շապիկը բարձրացնելով՝ ձեռքը բար-  
 ձրից վերբերեց, Եանիօն այն ժամանակ  
 միայն աղաղակեց. «Մայրիկ» . . . . և քանի  
 պահապանը նրան ջարդում էր այնքան էլ  
 նա «մայրիկ, մայրիկ» էր կոչում՝ բայց քանի  
 գնում աւելի թոյլ ու թոյլ ձայնով և մի  
 հարուածում մանուկը լռեց ու այլ ևս չէր  
 կոչում իւր մօրը . . . :

Այ գու յիմար՝ չար Ստախ, ո՞վ երե-  
 խային այդպէս կծեծի, առանց այն էլ նա  
 այնպէս փոքրիկ, նուազ էր հաղիւ էր շունչ  
 քաշում . . . : Մայրը եկաւ մանուկին տա-  
 նելու և հարկադրուած էր նորան ձեռքերի  
 վերայ տանել . . . : Միւս օրը արդէն Եանիօն  
 չվերկացաւ, իսկ երրորդ օրը երեկոյեան մեռ-  
 նում էր թաղիքի վերայ վերմակի տակ։

Ծիծեռնակները ճլզլում էին կեռա-  
 սենու վերայ, որը բուսնում էր խրճճի մօտ՝  
 արեգակի ճառագայթը լուսամուտով մըս-  
 նում էր ներս ու իւր սոսեփայլ լոյսը ձգում էր  
 երեխայի փոքրիկ գլխի և առանց արեան  
 որ և է նշոյլի՝ երեսի վերայ։ Այդ ճառա-  
 գայթը, կարծես թէ ճանապարհ էր, սրով  
 պէտք էր հեռանար փոքրիկ երեխայի հո-  
 գին։ Կաւ է, որ դոնէ մահուան այդ բո-  
 պէին մի լայն արեգակնային ճանապարհ էր  
 երևում. կեանքը նեղ և փշտ մի շաւղ էր։  
 Այժմ խոր ընկած կուրծքը գեռ տատա-  
 նում էր շնչառութեամբ, բայց երեխայա-  
 կան երեսը, կարծես թէ ահանջ էր դնում  
 դէպ իրեն համեղ բաց պատահանով գիւղի  
 արձագանգներին։ Երեկոյ էր։ Աղջկերբը,  
 հունձից վերադառնալով, երգում էին. «Օհ,  
 կանաչագեղ մարգում», իսկ առուից սրինդի  
 ձայներ էին հասնում։ Եանիօն վերջին ան-  
 դամ ահանջ էր դնում թէ գիւղն ինչպէս է  
 նուազում . . . : Վերմակի վերայ նրա ա-  
 ռաջ դրած էր նրա տաշեղէ ջուլթակը։

Յանկարծ մեռնող երեխայի երեսը  
 պարզուեց և դողդոջուն շրթունքները շը-  
 շնջացին.

— Մայրիկ . . . :

— Ի՞նչ է, կուրծքիս — ձայն տուեց

19 - 91262



մայրը) որին արտասուքը խեղդում էին . . . :

—Մայրիկ, Աստուած երկնքում ինձ  
կտանց իսկական ջութակ:

Կտանց որդեակի կտանց—պատասխա-  
նեց մայրը:

Բայց էլ ոչինչ չկարողացաւ ասել.  
նորա մինչև այժմ ամուր կուրծքը պատառ  
պատառ էր լինում աւելացող վշտից. նա  
միայն կարողացաւ հառաչել. «Օհ, Յի-  
սուս, Յիսուս», — ընկաւ երեսով արկղի վե-  
րայ ու սղբացրեց ինչպէս մի խելագար, կամ  
ինչպէս մի մարդ, որ անտնում է, թէ չի  
կարող խլել անգամ թ մահից սիրելի էակին . . . :

Եւ նա էլ չխլեց . . . : Գլուխը բարձ-  
րացնելով նա նորից նայեց Կանկոսի վերայ.  
Փոքրիկ երաժշտի աչերը բացուած և ան-  
շարժ էին, երեսը լուրջ, ախուր ու երկա-  
րացած էր: Արեգակի ճառագայթը նոյնպէս  
անճետացաւ:

Խաղաղութիւնն քեզ, Կանկո:



1a. ~~507~~

4777

000787

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0005787

